№ 8 ՇԱԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 12

1908

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 12 № 8

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ" Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յունվարի 4-ին Բաքւում վախճանված

Վահրամ Կարապետեան Մութաֆեանի

վշտահար մայրը և քոյրերը յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին, որ ամբիծքը կատարվելու է այսօր, ամսիս 12-ին, երեկ. ժամը 6-ին (Գոլովինսկի պրօսպեկտ, տուն Անանեանի, № 20)։ Յուղարկաւորութիւնը լինելու է կիրակի, ամսիս 13-ին, առաւօտ. ժամը 10-ին, դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ 1—1

Կիրակի, յունվարի 13-ին, կատարվելու է տարվայ հոգեհանգիստ իրանց սիրելի անմոռանալի մօր և քրոջ, հանգուցեալ

ՍԱԼՈՄԷ ԱՂԱԼՈՅԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆՑԻ,

որի համար յայտնում են դուստրները՝ Սօֆիա և Վարվառէ Գրիգորեան Լազարեանցները, եղբայրը Բագրատ Աղալոյեան Ծատուրեանցը և քոյրը Կատարինէ Աղալոյեան Փարէժուղեանցը՝ ազգականներին, բարեկամներին և ծանօթներին՝ ներկայ լինել Խօջիվանքի գերեզմանատան եկեղեցում։ Պատարագը կը սկսվի 10½ ժամին, հոգեհանգիստը 12 ժամին։

(շ.) 1—1

Տիկին Սօֆիա Կարապետեան, բժիշկ Ալէքսանդր Աբրահամեան Ղազարեանցները զաւակներով հանդերձ ցաւօք սրտի յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին, առաջինի անգնահատելի եղբօր, երկրորդի անմոռանալի աներորդու, իսկ վերջինների հայրախնամ քեռու՝

ՎԱՀՐԱՄ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՄՈՒԹԱՖԵԱՆԻ

վաղաժամ մահվան լուրը։

Ամբիծքը կը կատարվի այսօր երեկոյեան ժամը 6-ին. (Գոլովինսկի պրօսպեկտ, տուն Անանեանի, № 20)։ Յուղարկաւորութիւնը տեղի կունենայ վաղը, ամսիս 13-ին, ժամը 10-ին՝ Մողնու ս. Գէորգ եկեղեցին, իսկ թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։

Յովհաննէս Կարապետեան և տիկին Լիսա Մութաֆեանները ցաւօք սրտի յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին՝ առաջինը իր եղբօր, երկրորդը իր տագեր՝ անմոռանալի

Վահրամ Կարապետեան ՄՈՒԹԱՖԵԱՆԻ

մահվան լուրը։ Ամբիծքը կը կատարվի ամսիս 12-ին, շաբաթ օրը, երեկոյեան 6 ժամին (Գոլովինսկի պրօսպեկտ, տուն Անանեանի, № 20)։ Յուղարկաւորութիւնը տեղի կունենայ ամսիս 13-ին, կիրակի, առ. ժամը 10-ին՝ Մողնու ս. Գէորգ եկեղեցին, իսկ թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։

(ու. շ.) 2—2

Ահագին թւով ապրանքների գները իջեցված են 20%-ից մինչև 60%.

Յունվարի 10-ից

ԵԱՐՕՍԼԱՎՍԿԻ ՄԱԳԱԶԻՆ

Գոլովինսկի պր., Արքունական Թատրոնի մօտ, „Боярская" հիւրանոցի հանդէպ, Ստեփանեանի տուն.

Նշանակված է բացառապէս յատուկ էժան վաճառքի համար, որով ֆիրմայի բոլոր բաժանմունքներից կուտակված է ահագին ապրանք, մնացած անցեալ սեզոններից։ Վաճառվելու է ապշեցուցիչ էժան գնով։

ՅՈՒՆՎԱՐԻ 10-ԻՑ ՄԻՆՉԵՒ 10-Ն ՓԵՏՐՎԱՐԻ

→ ՆՇԱՆԱԿՎԱԾ Է ՄԻՆՉԵՒ ՕՐՍ ՉԵՂԱԾ ←

ԱՀԱԳԻՆ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ

Մագազինում գտնված բոլոր ապրանքները վաճառվելու են իրանց իսկական արժէքից 20%—60% պակաս։ Վաճառքի կան մեծ քանակութեամբ բրդէ կտորներ, բամբակէ գունաւոր գործուածքներ, Սարատովի սարպինկա, կտաւ, սեղանի սպիտակեղէն, գունաւոր սփռոցներ, ձմեռվայ և ամառվայ վերմակներ, կանանց և տղամարդկանց պատրաստի սպիտակեղէն, գուլպաներ, շալեր և գործված թաշկինակներ, պատուհանի վարագոյրների տեսլ։

ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔԸ

կը շարունակվի հետևեալ օրերում. յունվարի 10, 11, 12, 14, 15, 16, 17, 18, 19, 21, 22, 23, 24, 25, 26, 28, 29, 30 և 31-ին և փետրվարի 1, 2, 4, 5, 6, 7, 8, 9-ին։

ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔԻՑ յետոյ Եարօսլավսկի մագազինը որոշ ժամանակ փակ կը լինի։

Ահագին թւով ապրանքների գները իջեցված են 20%-ից մինչև 60%.

(տ.) (օ. մ.) 3—2

ԱՌԱՋԻՆ ԵՒ ՎԵՐՋԻՆ

ԱՒԱՐՏՄԱՆ ՎԱՃԱՌՔ

Въ Единственной торговлѣ

по американски"

ԽԱՆՈՒԹՈՒՄ

ՄՇՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿԱԾ

Գներից 10—30%

ԴԷՊԻ

ԱՄԵՐԻԿԱ

մեկնելու պատճառով ծախում եմ իմ գեղեցիկ կերպով սարքած գալանտերէյնի և թղթի մեծ խանութս, որ առևտուր է անում օրական ոչ պակաս, քան

200 րուբլու։

Միակ առևտուր ամերիկական ձևով.
Միակ շանս վաճառականների համար.
Միակ առևտուր Թիֆլիսում.
Միակ Միքայէլեան փողոցում, № 96.
(12, 16, 20, 25, 27) 5—1

Երեքշաբթի, յունվարի 15-ին,

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Յօգուտ

ԴԱՒԻԹԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ

Տեղի կունենայ

չորս լեզուով ներկայացում

I

Հայերէն

„ՀԱՄԲՈՅՐԸ"

Կոմ.-ֆէէրիա 1 գործ., հեղ. Թ. դը-Բանվիլի, թարգմ. Արմէնեանի

Մասնակցում են.—տիկին Դուրեան և պ. Արմէնեան

II

Ֆրանսերէն

„ԱՄՈՒՍՆՈՒ ԲԱԽՏԸ"

(La chauce du mari)

Կոմ. 1 արար., հեղ. Կայյավէի և Ռ. դը-Ֆլէրի

Մասնակցում են.—իշխանուհի Հ. Ի. Ջամբակուր-Օրբէլիանի, իշխ. Վ. Վ. Բարիատինսկի, պ. Ա. Արմէնեան, իշխ. Գ. Ա. Բագրատիօն-Մուխրանսկի և Ս. Ա. Անդրէևի։

III

Վրացերէն

„ԳԻՃԵՐՎԱՑ ՍԱԲՐԸ ԽԷՐ Է"

Կոմ. 1 արար., հեղ. Գ. Սունդուկեանի, թարգմ. Աբաշիձէի

Մասնակցում են.—տ. տ. Գաբունիա-Ցագարէլի, Տասօ-Աբաշիձէ, պ.պ. Աբաշիձէ և Եօրդանով։

IV

Ռուսերէն

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Մասնակցութեամբ՝ տիկ. Լ. Բ. Եավօրսկայայի, իշխ. Վ. Վ. Բարիատինսկու, պ. Կ Ի. Շորշտէյնի և այլոց։

Սկիզբն է ժամը 8-ին երեկոյեան

Տոմսակները՝ Թատրոնի կասսայում.

Կարգադրիչ՝ Իշխանուհի Ե. Ի. Ջամբակուր-Օրբէլիանի

(հ. ու. շ. կ. ե.) տ. 5—3

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ամսիս 8-ից 3-րդ տրական գիմնազիայում վերսկսվեցին հայերէն լեզուով սիստեմատիկ դասախօսութիւնները նախկին ծրագրով, երեկոյեան ժամը 6½-ից սկսած։ Երեք դասախօսութեան վճարն է 5 կոպէկ։ Մուտքը Վելեամինովսկի փողոցից։

(տ. 3—3

ԵՐԴՈՒԵԱԼ-ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ

Կարապետ Եաղուբեան

Բագուից տեղափոխվեց Թիֆլիս.

Հասցէն՝ Ռտիշչեվսկայա 11, տ. Ե. Արծվեանցի.

(օ. մ. տ. 3—2

«ՅՈՒՇԱՐԱՐԻ» բովանդակութիւնը տես 4-րդ երես։

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՊԷՏՔ Է ՊԱՐԶ ԼԻՆԻ

Կաթողիկոսական ընտրութիւնները հայկական մի քանի շրջաններում առիթ են տուել այս անգամ այնպիսի խօսակցութիւնների, որոնք գոյութիւն չունէին մինչև այժմ և շատ օտարոտի կը թուային անցեալ ընտրութիւնների ժամանակ։

Դա ընտրութիւններին մասնակցելը չը մասնակցելու հարցն է, որի շուրջը պտտում են վիճաբանութիւնները։

Այն ժամանակ, երբ մեր հասարակութեան զանազան խաւերը պատրաստվում են մասնակցելու կաթողիկոսական ընտրութիւններին և հետաքրքրված են հաւանական թեկնածուների գնահատութեան խնդրով, կան տարրեր, որոնց համար դեռ պարզ չէ իրանց բռնելիք դիրքի բնաւորութիւնը դէպի ընտրութիւնները։

Օրինակ, յեղափոխական կուսակցութիւնները իրանց քննութեան սեղանի վրա են դրել իբրև մի նոր հարց, այն, թէ արդեօք թոյլատրելի է նրանց համար կաթողիկոսի՝ իբրև հոգևորականութեան պետի ընտրութիւններին մասնակցելը։

Եւ դեռ վերջնական պատասխան չէ մշակված

Որքան լսվում է՝ սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան պատկանողները տրամադիր չեն որևէ մասնակցութիւն ունենալ ընտրութիւններին։

Իսկ դաշնակցական խմբերը դեռ չեն յանգել մի ընդհանուր որոշման։ Նրանց մի ստուար զանգուածը ցանկանում է մասնակցել, իսկ միւսը բոլորովին հակառակ է, համարելով այդպիսի մասնակցութիւնը ապօրինի կամ անթոյլատրելի քայլ յեղափոխական այդ կուսակցութեան նորագոյն ծրագրի իմաստի տեսակէտով։

Մասնակցել թէ չը մասնակցել։

Պէտք է շուտով պատասխան տալ այդ հարցին, որպէսզի նրա համապատասխան գործնական քայլեր կամ պատրաստութիւններ տեսնվեն իրականութեան մէջ։

Արդեօք այդ յեղափոխական կուսակցութեան ծրագիրը թոյլ է տալիս, որ կուսակցութիւնը, իբրև յեղափոխական միութիւն, ասպարէզ գայ և այս գործում ակտիվ գործունէութեամբ, կազմակերպելով ընտրական ագիտացիա, թէ նա պէտք է բոլորովին հրաժարվի այդպիսի մի ձեռնարկութիւնից, իբրև իր ծրագրին հակասող մի գործից։ Կամ գուցէ ներելի է բռնել միայն կրաւորական մի դիրք և մասնակցել ընտրութիւններին ոչ կուսակցութեան անունից, թոյլատրելով՝ որ իւրաքանչիւր մարդ մասնակցէ ընտրութիւններին իբրև մասնաւոր մի անձն։

Այդ վէճով մենք չենք զբաղվի։ Թող իրանք, այս ու այն յեղափոխական կուսակցութիւնների պատկանողները, տակն ու վրա անեն իրանց ծրագիրները, պարզեն իրանց համար տրամադրելի և ոչ տրամադրելի գործելակերպերը և եթէ ցանկանում են, նոյնիսկ իրանց ծրագիրների վերաքննութեան և լրացման հարցեր յարուցանեն։

Բայց մենք հասարակական զարգացման տեսակէտով կը ցանկանայինք, որ ամէն բան կատարվէր օրը ցերեկով, անկեղծ ու շիտակ կերպով, որ ոչինչ չը գործվէր մթութեան ու մշուշի մէջ և որ հասարակութիւնը ազատ լինէր անորոշութիւնների և գաղափարական շփոթի այլանդակութիւններից, որոնք այնքան ճնշել ու քարացրել են արդէն մեր ժողովրդի գիտակցութիւնը շատ տեղերում։

Հասարակական գործողները պարտաւորութիւն և միևնոյն ժամանակ մի պատասխանատւութիւն ունեն ժողովրդի առաջ—ներկայացնել նրան իրենց դրութիւնը և գործող ուժերի բնաւորութիւնը իրանց իսկական պատկերով և իմաստով։

Մենք լաւ հասկանում ենք, որ ամէն մի կուսակցութիւն մշակում է իր համար գործելակերպ. բայց մենք կը ցանկանայինք, որ դա լինէր արգիւնք սխոտեմի վերածած հաստատ մի դաւանանքի և ուրեմն չը թելադրէր հակասական ու միմեանց ժխտող արարքներ։

Երբ հասարակութեան առաջ դրված են որոշ ծրագիրներ և գործելակերպեր, այնուհետև հասարակութեան իրան է մնում ընտրութիւն անել և գերադասութիւն տալ նրանցից որևէ մէկին։

Հասարակութիւնը պէտք է որոշակի գիտենայ, թէ ով ինչ ծրագրով է հանդէս գալիս ասպարէզ առհասարակ, թէ ինչու է նա հետևում այս ու այն գործելակերպին և ինչպէս է նա հաշտեցնում իր արարքները զանազան դէպքերում։

Կարելին չափ աւելի լոյս, աւելի որոշութիւն, աւելի անկեղծութիւն, շիտակութիւն և հետևողականութիւն։

Ա. Քալանթար

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՓՈԽԱՐՔԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

V

Խորհրդակցութիւնը միաձայն եկաւ այն եզրակացութեան, որ նպաստի չափը պէտք է որոշել միջին թւով 6 ամսվայ համար։ Գալով նպաստների բաշխման կազմակերպչական գործին, եղան մի քանի առաջարկութիւններ։ Հայ պատգամաւորները առաջարկեցին. 1) հաստատել Թիֆլիսում կենտրոնական նպաստամատոյց յանձնաժողով, կովկասեան կենտրոնական իշխանութեան և հասարակութեան ներկայացուցիչներից, որ կունենայ ընդհանուր վերահսկողութիւն. 2) հաստատել ամէն մի գաւառում, ուր պէտք է նպաստ տրվի, գաւառական կոմիտէներ, տեղական իշխանութեան և ժողովրդի ներկայացուցիչներից. 3) հաստատել աւելի մանր, այն է՝ րայօնական կոմիտէներ, ամէն մի գաւառում մի քանի հատ, դարձեալ ժողովրդի և տեղական իշխանութիւնների ներկայացուցիչներից։ Այս առաջարկութիւնները սկզբունքով հաւանութիւն գտան։

Գալով այն հարցին, թէ քանի տարով յետաձգել տրվելիք նպաստի յետս գանձումը, խորհրդակցութիւնը գտաւ, որ 3 տարի գոնէ ժամանակամիջոց պէտք է տալ։

Հ. Առաքելեան, իբրև հայոց Կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովի անդամ-քարտուղար, հաղորդեց խորհրդակցութեանը մի քանի անհրաժեշտ տեղեկութիւններ այդ Յանձնաժողովի և նրա ճիւղ համարվող Բագուի նպաստամատոյց մասնաժողովի գործունէութեան և նրանց ձեռքով տրված նպաստների ու բերել տուած ցորենների մասին յընթացս 1906 և 1907 տարիների: Դեռ 1906 թ-ին Նպաստամատոյց Յանձնաժողովը իր հաւաքած տեղեկութիւնների հիման վրա եկել էր այն եզրակացութեան, որ Գանձակի, Ղազախի, Ջիվանշիրի, Արէշի, Զանգեզուրի, Շուշու, Ջէբրայիլի, Շարուր-Դարալագեազի, Նախիջևանի և Ալէքսանդրօպօլի գաւառներում 8723 ծուխ ամենասուր կարիք ունեցող և 4275 ծուխ սուր կարիք ունեցող ժողովուրդ կայ, և այդ սուր կարիքը լրացնելու համար պէտք է յատկացնել 1,304,980 րուբլի: Բացի դրանից՝ 4,500 ծուխերի պէտք է տրվէր 50,000 պուդ սերմացու: Յանձնաժողովը կարողացել է գնել միայն 200 վագօն ցորեն Արմաւիրում կամ 150,166 պուդ, որի համար վճարել է 127,160 րուբլի, իսկ այդ ցորենի տեղափոխութեան համար Արմաւիրից մինչև Եւլախ կայարանը վճարվել է մօտ 50,000 րուբլի: Եւլախից տեղափոխութիւնը մինչև կարօտեալ վայրերը, մանաւանդ Զանգեզուր, նոյնպէս անհագին ծախք է նստել: «Արդ,—ասաց Առաքելեան,—եթէ դեռ 1906—07 թ-ին կարիքը այնքան անհագին է եղել և Յանձնաժողովը կարողացել է գոհացնել միայն այդքան նուազ չափով, որքան ուրեմն մեծ պէտք է լինի կարիքը այժմ, երբ արդէն սով է տիրում շատ տեղերում»:

Իսկ յանձնաժողովը այլ ևս լուրջ միջոցներ չունէ նպաստելու:

Դրանից յետոյ խորհրդակցութիւնը քննեց այն հարցը, թէ ինչ ձևով տալ նպաստը—դրամով, ցորենով, ալիւրով և որտեղ ձեռք բերել սերմացու: Նա եկաւ այն եզրակացութեան, Ալ. Քալանթարի տուած բացատրութիւններից յետոյ, որ սերմացուն պէտք է տեղում գնել, իսկ նպաստը տալ դրամով, թողնելով բաժանումը և ձեր տեղական կոմիտէներին: Նպաստները պէտք է տալ ծուխերին և ոչ անհատներին:

Դալով հասարակական աշխատանքներին, խորհրդակցութիւնը սկզբունքով ընդունեց նրանց կազմակերպութեան անհրաժեշտութիւնը:

Սպառելով ծրագրի մէջ դրված հարցերի քննութիւնը, նախագահը յայտնեց, որ ներքին գործերի մինիստրից ստացված հեռագրի համաձայն՝ նպաստ տալու միջնորդութիւնը պէտք է ներկայացնել մինիստրների խորհրդին՝ Պետական Դումա մտցնելու համար մինչև յունվարի 5-ը: Յայտնվեց, որ այդ պատճառով Փոխարքայի խորհուրդը գումարվելու է հէնց երկրորդ օրը, դեկտ. 29-ին, վերջնական որոշումն կայացնելու համար:

Որքան մեզ յայտնի է վստահելի աղբիւրներից, Փոխարքայի խորհուրդը որոշել է խնդրել Անդրկովկասի կարօտեալ նահանգների համար նպաստ 2,653,500 րուբլի:

Փոխարքայի այս միջնորդութիւնը մինիստրների խորհրդի միջոցով կը մտցվի Պետական Դումա ի քննութիւն և ի լուծումն:

Եւ այսպէս, պէտք է գոհ լինել, որ Թիֆլիսի հայոց Նպաստամատոյց Յանձնաժողովի նախաձեռնութեամբ սկսված գործը՝ օգնել երկրի կարօտեալ ազգաբնակութեան՝ գոհացուցիչ լուծումն ստացաւ և յոյս կայ, որ Պետական Դուման կը յարգէ Փոխարքայի միջնորդութիւնը:

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Իգդիր, 5 յունվարի

Իգդիրում էլ հացավաճառները փորձեցին հացի գինը բարձրացնելու համար: Գաւառապետ պ. Եսոնինը ալիւր առնելով սպառողների կանանցը տալ, որոնք հաց թխելով ձեռնտու էին համարում II տեսակի փունթը 3 կոպէկով ծախել, որպէս և ուզում էին շարունակել: Այդ բանը խելքի բերեց հացավաճառներին և վերջ դրվեց գործադուլին: Գ. գաւառապետը իր ձեռք առած եռանդուն միջոցների համար, որը արգելել է Սուրմալուից ցորենի արտահանութիւնը, մեծ շնորհակալութեան է արժանի, որովհետև առեղի ցորենը տեղացի ժողովրդին իսկ չի բաւականացնի:

Իգդիր, 5 յունվարի

Պատերազմի համար Թիւրքիայի եռանդով պատրաստվելու լուրերը տարածվում են յամառութեամբ: Նրա ագենտները վխտում են Սուրմալու և այլ սահմանակից գաւառների ամեն մի անկիւնում: Ալաշկերտի Թօփրակ-Կալէի մի թուրք պաշտօնեայ, ոչխարավաճառի անունով, քանի օր առաջ եղել է Սուրմալուում մի քիւրդ-բէգի մօտ: Նա բանակցել է տեղացի ցեղապետների և կրօնականների հետ և պայմանաւորվել է նրանց հետ օգնութեան ձևերի մասին, որ պէտք է տան՝ Թիւրքերը Ռուսաստանի վրա արշաւելիս: Թւում է՝ Սօվուջ-Բուլաղին տիրելը շլացրել է Թիւրքերին: Յամենայն դէպս ռուս կառավարութեանը լուրջ աշխատանք է սպասում երկրի ներսում՝ արտաքին թշնամու հետ պատերազմ ունենալիս:

Յով. Խօջաէկնեան

—

Պետերբուրգ.—Սենատի քրէական վճռաբեկ ատեանի դատաստանական վարչութեան դատավճռի համաձայն, պաշտօնից հեռացվում է ներքին գործերի մինիստրի օգնական Գուրկօն:

Պարիզ.—Յունվարի 5-ին Պարիզում ձերբակալված ռուսները, որոնց մօտ գտնվեցին Թիֆլիսում յափշտակված փողերից մի քանի հինգհարիւրանոց թղթադրամներ, դրականապէս բացասում են իրանց մասնակցութիւնը Թիֆլիսում բանկի կառքը կողոպտելու գործում և պնդում են, որ այդ ժամանակ իրանք գտնվում էին Պարիզում:

Ստոկհօլմ.—Ձերբակալվեց մի ռուս՝ Վլադիմիր Կրաշինսկի անունով, որ, անկասկած, մասնակցութիւն է ունեցել Թիֆլիսում պետական բանկի փողերի կողոպտմանը: Կրաշինսկին այստեղ եկաւ Ֆինլանդիայից և կիրակի օրը ջանաց բանկերում մանրացնել հինգհարիւրանոց թղթադրամները: Պարզվեց, որ բոլոր թղթադրամները Թիֆլիսում յափշտակված փողերից են: Կաշինսկին ձերբակալվեց, երբ կամենում էր էքսպրես նստել:

Պարիզ.—Դատաստանական քննիչ Ֆլօրին յայտնեց, որ հնարաւորութիւն չունի քննութիւն բանալ ռուս Վալախի և Եամպօլսկու դէմ, որոնք ձերբակալվեցին վերջերս Հիւսիսային կայարանում և որոնց մօտ գտնվեցին Թիֆլիսում յափշտակված փողերից: Առաւօտեան նրանք, ոստիկանական պաշտօնեաների հսկողութեան տակ, ուղարկվեցին մինչև բելգիական սահմանը:

Կ. Պօլիս.—Գտան խօլերայով 9-րդ հիւանդ Զէյթուն Բուռնի կոչված թաղում:

Պարսկաստանի շահերի համար ռուսաց դեսպանի արած յայտարարութեանը՝ Բ. Դուռը խոստացաւ դադարեցնել պարսկական սահմանագլխային շրջաններում պատերազմական գործողութիւնները:

Թէհրան.—Էլեկտրաքարշի գործադուլը վերջացաւ: Բանուորները հրաժարվեցին իրանց պահանջներից: Վարչութիւնը համաձայնեց ծառայողներին ձմեռային հագուստներ տալ:

—

Կ. Պօլսից հեռագրում են «Р. Сл.» լրագրին, որ պարսկական սահմանագլխի վրա գտնվող Թիւրքական զօրաբանակը հրաման է ստացել զէնքի կանչել պահեստի զօրքը և ռեդիֆիստներին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ս. ՇԱՀԱԶԻԶԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

Գրական երկու խոշոր դէմքեր կարճ ժամանակում գերեզման իջան իրար ետևից:

Պերճ Պռօշեանցին փոխարինեց Սմբատ Շահազիզը:

Երկուսն էլ ծնվել են Աշտարակում, մեծացել իրանց այդ ծննդավայրը:

Պռօշեանը կենտրոնացրել է իր գրչի ամբողջ ույժը սահմանափակ միջավայրի մէջ, կենդանագրել իր ծննդավայրը, իրան լաւ ծանօթ ժողովրդական կեանքը, պատկերացրել նրա բնորոշ տիպերը:

Մինչդեռ ուրիշ հողի վրա լայն զգացումներով ու ազատ գաղափարներով սնված ու տոգորված բանաստեղծ Շահազիզը անցնում էր իր ծննդավայրի անձուկ սահմաններից դուրս դէպի ընդհանուր հասարակական կեանքը, ձգտում էր դէպի վեր և երգում ազգային վիշտն ու իղձերը:

Նա, կարծես, իր գծող ու վիպագրող հայրենակցի սահմանափակ մտապատկերներին հանդէպ, ուզում էր պարզել մի այլ հրապուրիչ տեսարան և նոր խօսքեր ու վեհ ձգտումներ ներշնչել մատաղ սերնդին:

Երկուսի կատարած դերն էլ ազնիւ է ու խոշոր:

Երկուսի կորուստ էլ մեր աղքատ, ստեղծագործական ինքնուրոյնութիւնից զուրկ գրականութեան համար զգալի:

Կորուստի թարմ տպաւորութեան տակ թելադրված վշտի ու ցաւակցութեան արտայայտութիւնները արդիւնք են այդ գիտակցութեան. Նրանք նշան են նրանց պատկառելի գործունէութեանը ուղղված այն երախտագիտական զգացմունքի, որ այսօր տածում է դէպի նրանց անցեալը հայ հասարակութիւնը:

Մասնաւորապէս հետաքրքրական է և այն միջավայրի վերաբերմունքը, որտեղից դուրս են եկել Պռօշեանն ու Շահազիզը:

Խօսքս Աշտարակի մասին է:

II

Ս. Շահազիզի մահվան լուրը ստացվելուց երկու օր յետոյ ես մտայ Աշտարակ:

Առաջին տպաւորութիւնը, որ ես կարողացայ ստանալ խօսակցութիւններից, ամփոփվում էր հետևեալ անպաճոյճ ու անկեղծ նկատողութեան մէջ:

— Այս տարի շատ բէխէր տարի եղաւ Աշտարակի համար: Էլ ո՞վ ունենք:

Այդ էր լսվում ամեն կողմից: Խօսում էին խանութներում խմբված մարդիկ, պատմում էին թռուցիկ տպաւորութիւններ հանգուցեալի բարձր անձնաւորութեան ու ծննդավայրին արած այցելութեան մասին: Պօստը ստացվելուն պէս լրագրական էջերից կարդում էին միայն այն, ինչ վերաբերում էր հանգուցեալ բանաստեղծին:

Առանձին հետաքրքրութիւն էին ցոյց տալիս մանուկներն անգամ: Գիւղացիներից մէկի տանը մի փոքրիկ գիմնազիստ բաւականին աշխոյժ կերպով բնորոշակում էր հանգուցեալի լուսանկարը:

Մի խօսքով Ս. Շահազիզի մահը օրվայ հերթական խնդիրն էր: Իսկ Պռօշեանցի մասին, որ պատկերացրել, յաւերժացրել է Աշտարակը, համարեա, չէին խօսում, քիչ էին ափսոսում:

Այդ հանգամանքը թերևս ունի իր որոշ խոր պատճառները, որոնց պէտք է որոնել տեղական իրականութեան մէջ, որի հետ Պռօշեանը յաճախակի է շփվել և սերտ առնչութիւն ունեցել:

Շահազիզը ընդհակառակը եղել է հեռու իր ծննդավայրի գծուծ իրականութիւնից, ապրել է շարունակ հեռու և մնացել իր համագիւղացիների սիրելին, Աշտարակի իդէալը:

— Այս մարդ էր.—ահա թէ ինչպէս են բնորոշում նրա լաւութիւնը:

Եւ իսկապէս Աշտարակում հանգուցեալ բանաստեղծին «Սմբատ աղա» էլ անուանում են:

Ստարութիւն գնալուց յետոյ նա հայրենիք վերադարձել է մի անգամ միայն, 1873 թւականին, այն էլ շատ կարճատև ժամանակով, մօտ մի ամիս, բայց նրա թողած տպաւորութիւնը՝ իբրև ուսումնական, բարեսիրտ ու մատչելի մարդու՝ չափազանց զօրեղ է: Ինչպէս պատմում են, իրան դիմողներին նա երբէք չէ մերժել, շատ թէ քիչ չափով օգնել է խնդրողներին, մանաւանդ իր ազգականներին: Մահից դեռ մի քանի օր առաջ հանգուցեալը դրամական օգնութիւն է ուղարկել իր եղբօրն ու քրոջը: Բաւականին օգնել է իր քրոջ աղջկանը: Տեղական փոխատու խնայողական բանկը հիմնելիս, երբ դիմել են իրան, ուղարկել է 200 րուբլի: Նպաստել է մի քանի աշտարակցիներին՝ մտնել Լազարեան ճեմարանը, և այսպէս թէ այնպէս կարողացել է բաւարարութիւն տալ շատերին: Ինչպէս ասացինք, բացառութիւն է կազմում մէկը միայն, որ դժգոհ է հանգուցեալից. այդ նրա հարազատ եղբայր Սարիբէկն է: Դժգոհութեան պատճառն այն է, թէ ինչու Սմբատը քիչ գումարով է օգնում իրան, ինչու է օգնում ուրիշներին: Այդ պահանջները իբր թէ նա պատճառաբանում է նրանով, որ Սմբատը տիրացել է իր բաղդին, իր փոխարէն է նա Լազարեան ճեմարան գնացել, մեծ մարդ դարձել և այլն:

Դա գիւղական միջավայրի առանձնայատուկ գծերից մէկն է: Պարզ է այն, որ Սմբատ Շահազիզը աշտարակցիների սիրելին էր, և նրա կորուստը մեծ ցաւ է պատճառել իր համագիւղացիներին, որոնք պատրաստվում էին նորից դիմելու նրա օգնութեանը բարենպատակ ձեռնարկութեան համար, բայց անակնկալ մահը խոչընդոտ հանդիսացաւ այդ բանին:

III

Ներկայումս Աշտարակում Շահազիզեաններ շատ կան, սակայն պէտք է նկատել, որ դրանցից իսկականը միայն մէկն է. դա բանաստեղծի հարազատ եղբօր Սարիբէկ (Սարօ) Շահազիզեանի տունն է. Մնացեալները ձեռք են, որոնք բանաստեղծի անուան հրմայքից դրաւված դարձել են Շահազիզեաններ:

Այն տունը, որից առաջացել է Սմբատը, Աշտարակի մէջ օրինակելի անուն ունի թէ իր բարոյական յատկութիւններով և թէ մանաւանդ նրանով, որ չափազանց անշահասէր է եղել: Դրանցից կենդանի են միայն բանաստեղծի հարազատ եղբայր Սարօն և քոյր Եղիսաբեթը. ունի նաև եղբօր որդիներ և քրոջ զաւակներ:

Առանձին գովասանքով ու հրճուանքով են խօսում հանգուցեալի հօր՝ տէր-Սիմօնի ու մանաւանդ մօր՝ Խուրշիդխանի մասին, որը Աշտարակի առաջին գեղեցկուհին և առաջին խելօք կինն է եղել:

1847 թւին տէր-Սիմօնը խօլերայից մեռնելով՝ թողել է 8 որբերին մօր խնամատարութեան ներքոյ: Դրանցից 6-ը եղել են արու զաւակներ՝ Յովակիմ, Եփրեմ, Սահակ, Կամսար, Սարօ և Սմբատ, իսկ միւս երկուսը եղել են աղջիկներ. մէկը ամուսնացել է Աշտարակում, իսկ երկրորդը՝ փոքրը՝ Էջմիածնում և այժմ մեռած է:

Տղաներից ամենափոքրը Սմբատն է: Նա ծնվել է 1841 թւին: Մանկութիւնից եղել է կարճահասակ, նրբակազմ, բայց զգայուն, սրախօս ու կայտառ: Հօր մահվան ժամանակ նա 6 տարեկան էր, և, ինչպէս ասում են, մայրը անհագին ազդեցութիւն է թողել նրա վրա, և հէնց այդ ջերմ սէրն էլ արտայայտել է բանաստեղծը իր երգերի մէջ:

Եղբայրներից ամենամեծը՝ Յովակիմը, որ ծառայում էր Էջմիածնի սինօդում, աշխատում էր իր եղբայրներին ուսման տալու մասին հոգ տանել. դիմում է Ներսէս Աշտարակեցուն և խնդրում որդեգրել որբերին: Վերջինս թէև մերժում է, բայց և այնպէս խորհուրդ է տալիս դիմել Լազարեան ճեմարանի վարչութեան: Այդպէս էլ նա վարվում է. դիմում է երկու եղբայրների մասին՝ Սարօյի և Սմբատի: Վիճակը ընկնում է Սարօյին, բայց նա չէ ուզում հեռանալ գիւղից, գնալ ուսում ստանալ. փոքրիկ Սմբատը պատրաստակամութիւն է յայտնում գնալ և 1852 թւականին մտնում է ճեմարանը: Սարօյի պահանջն ու դժգոհութիւնը դրանով է պատճառաբանվում:

IV

Սմբատ Շահազիզը այնուհետև հայրենիք վերադարձել է միայն, ինչպէս վերև ասացի, 1873 թւականին: Նրա մուտքը Աշտարակ տեղի է ունեցել հանդիսաւոր շուքով. պատմում են, որ 20-ից աւելի ձիաւորներ գնացել են Երևան ընդառաջ և բերել գիւղը:

Գիւղում եղած ժամանակ նա միշտ այցելում էր իր աղքատ ազգականներին, աշխատում էր մօտ շփում ունենալ ժողովրդի հետ և ապրում էր գիւղական համեստ, անպաճոյճ կեանքով:

Գիւղական սովորութեան համաձայն՝ նա պատարագ է անել տալիս իր հանգուցեալ հօր յիշատակին, Յոհանավանք ուխտ է գնում, մատաղ անում: Այդ երկու դէպքումն էլ բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ նա խօսում է ժամանակակից իրականութեան պահանջի մասին, բացատրում կրթութեան նշանակութիւնը, յորդորում է ուսում տալ իրանց զաւակներին, քարոզում է գործել սիրով, համերաշխ:

Սակայն այդ բոլորի մասին չափազանց թռուցիկ յիշողութիւններ են մնացել. այսքանը միայն կարողանում են ասել, որ նրա խօսեցածները եղել են տպաւորիչ, ազդու. շատերը զգացվել ու արտասուել են:

Ինչ հանդիսաւորութեամբ ընդունել են, նոյնպիսի շուքով էլ ճանապարհ են դրել Երևան ու մինչև Քանաքեռ:

Աշտարակցոց յիշողութեան մէջ բանաստեղծը մնացել է իբրև մաքուր, մեծ ուսումնական մարդ, սրտացաւ բարեկամ:

Ի յիշատակ իրանց երախտագիտութեան, Աշտարակի հասարակութիւնը համախոսական վճռով որոշել է տեղական ծխական երկդասեան դպրոցը դարձնել չորրորդասեան և անուանել Շահազիզեան,

Իսկ փոխատու խնայողական բանկի լիազօրների ժողովը իր զուտ օգուտներից 1000 րուբլի յատկացրել է նոյն դպրոցի շէնքի կառուցման համար:

Ինչպէս յայտնի է, նոյն հասարակութիւնը Պռօշեանի յիշատակը յաւերժացնելու համար որոշել է բանալ Պերճեան գրադարան: Միևնոյն բանկը 200 րուբլի էլ յատկացրել է այդ գրադարանին:

Լ. Դանիէլեան

ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ*)

I

Էջմիածնի սինօդը՝ ի նկատի առնելով Էջմիածնի և առհասարակ բոլոր վանքապատկան կալուածների անբարեկարգ վիճակը և, որ գլխաւորն է, նրանց շահագործման անխնամ եղանակը՝ իր 1907 թ. սեպտեմբերի 3-ի օրագրական վճռով, համաձայն հանգուցեալ վեհափառ կաթողիկոսի բարեհաճ կամքի, Թիֆլիսում նշանակեց ժողով, որպէսզի հնարաւոր լինի այդ ժողովի օգնութեամբ ունենալ մի նպատակայարմար ծրագիր՝ բարւոքելու և կանոնաւոր կերպով շահագործելու մեր բոլոր կալուածները, իր կողմից մեզ նշանակելով ներկայացուցիչ:

Թիֆլիսում ժողովները սկսվեցին նոյեմբերի 6-ին և վերջացան նոյն ամսի 28-ին: Սկզբում ունեցանք երկու ընդհանուր ժողով, ապա՝ բաժանվելով երկու սեկցիայի—1) տնտեսական— 2) վարչական-իրաւական, իւրաքանչիւր սեկցիան կազմեց իր զեկուցումը և ներկայացրեց ընդհանուր ժողովին ի հաւանութիւն և ի հաստատութիւն:

Երկու սեկցիաների աշխատանքը վերջանալուց յետոյ՝ տեղի ունեցան նաև չորս ընդհանուր ժողովներ, որոնք երկու սեկցիաների ներկայացրած զեկուցումները քննելուց և որոշ փոփոխութիւններ անելուց յետոյ հաստատեցին:

Ընդհանուր ժողովներին նախագահում էինք մենք, իսկ քարտուղարի պաշտօնը վարում էր բարձր. Մուշէ վարդապետ՝ ներկայացուցիչ Նոր-Նախիջևանի թեմական դպրանոցի հոգաբարձութեան:

Վերոյիշեալ ժողովներին մասնակցելու համար սինօդի կողմից հրաւիրված էին թեմական դպրանոցների հոգաբարձութեանց ներկայացուցիչները և կալուածների կառավարիչները, իսկ մեր կողմից՝ համաձայն սինօդի օրագրական որոշման՝ հետևեալ ֆինանսիստ, իրաւագէտ և գիւղատնտես յայտնի անձինք—պ. պ. 1) Պօղոս Ղամբարեան, 2) Կոստանդին Ալիխանեան, 3) Աղէքսանդր Քալանթար, 4) Սիմէօն Ջաւարեան, 5) Միհրան Անանեան, 6) Աւետիք Սահակեան, 7) Աղէքսանդր Մելիք-Ազարեան, 8) Գրիգոր Ազարբէկեան (հանքագէտ), 9) Նիկողայոս Քալանթարեան, 10) Սամսոն Յարութիւնեան, 11) Յովհաննէս Սաղինդարեան, 12) Արշակ Թադէոսեան:

Բացի վերոյիշեալ պարոններից, երկու սեկցիաներն էլ իրանց կողմից հրաւիրել են այլ իրաւագէտներ և գիւղատնտեսներ, որոնց մասին յիշատակված են իրանց տեղերում զեկուցման մէջ: Օգտվելով դէպքից՝ հրապարակով մեր խորին շնորհակալութիւնն ենք յայտնում ընդհանուր ժողովներին և սեկցիաների աշխատանքին մասնակցող այն բոլոր բարի անձանց, որոնք իրանց հանգստութիւնը և ժամանակը չը խնայելով նըպաստեցին մի կարևոր և լուրջ գործի:

Ի նկատի առնելով, որ հետաքրքրական կը լինի ընթերցող հասարակութեան համար ծանօթանալ երկու սեկցիաների կազմած զեկուցման՝ եկեղեցապատկան և վանքապատկան կալուածների բարեկարգութեան և շահագործման առթիւ, մանաւանդ որ մի քանի տեղերից էլ այս մասին մեզ դիմել են և խնդրել տպագրութեան տալ մամուլում սեկցիաների կազմած զեկուցումները, ուստի մենք մեր պարտքը կատարելով նոյնութեամբ առաջ ենք բերում այստեղ յիշեալ երկու զեկուցումները, մինչև որ շուտով առանձին գրքոյկով լոյս կընծայենք բոլոր մեր ձեռքի տակ ունեցած կալուածների վերաբերեալ նիւթերը ի միասին, այն է՝ տնտեսական և վարչական սեկցիաների զեկուցումները, ընդհանուր ժողովների արձանագրութիւնները, գիւղատնտես կառավարիչների ընդարձակ զեկուցումները մեր խոշոր կալուածների մասին, և ամփոփ տեղեկութիւններ մեր կալուածների տարածութեանց և ստացված արդիւնքների մասին:

Նախ առաջ ենք բերում տնտեսական զեկուցումը:

(Կը շարունակվի)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ղօչան, 2 յունվարի

1903 թւից ի վեր Ղօչանում գոյութիւն ունի «Խրիմեան» անունով գրադարան-ընթերցարան: Այսպիսի մի խուլ վայրի համար գրադարանը պէտք է համարել կրթական ամենաանհրաժեշտ մի հիմնարկութիւն: Գրադարանի հիմնադիրները՝ աչքի առաջ ունենալով Ղօչանի հասարակութեան՝ տգիտութեան աշխարհում խարխափող դրութիւնը, մի մեծ ծառայութիւն են մատուցել՝ մի բուռն հայերին առաջնորդելով դէպի լուսաւորութիւն:

Մինչև 1907 թիւը թէ գրադարանի վարչութիւնն էր կանգնած իր կոչման բարձրութեան վրա և թէ գրադարանն էր ծառայում իր նպատակին. այդ ապացուցանում են գրադարանի թէ բաւականաչափ հարուստ թերթերը, թէ ձոխ գրքերը և թէ գրադարանի վերաբերեալ արած՝ ժողովների ու կանոնների արձանագրութիւնները: Իսկ այժմ...

Չը կայ մէկը, որ հետաքրքրվի նրանով: Ամիսներով այնտեղ յաճախորդ չէք տեսնի. և եթէ պատահում են հաս ու կէնտ ընթերցող անհատներ, նրանք էլ գիրքը վերցնում են ու ամիսներով իրանց մօտ պահում, զուցէ այլևս յետ էլ չեն տալիս:

1908 թւի յունվար ամիսն է արդէն, բայց ոչ մի թերթի բաժանորդագին չէ ուղարկված, չը նայած որ գրադարանի գանձարանի մօտ բաւականաչափ փող կայ թերթեր պահանջելու համար: Ո՞ւմ մեղադրենք. վարչութեա՞նը թէ՞ հասարակութեանը: Մեղաւորը անշուշտ հասարակութիւնն է, որ չէ ընտրել իր միջից ընդունակ և գործունեայ վարիչներ:

Այսպէս՝ մեր «Խրիմեան» գրադարանը մնացել է անտարբերութեան մատնված:

Վերջին յոյսներս դնում ենք տեղիս մի քանի երիտասարդների վրա. թող այս անգամ ևս գան իրանց գործունէութեամբ ցոյց տալու, որ առանց երիտասարդական եռանդի ոչ մի գործ կենդանութիւն չունի. թող գրադարանի հոգսը վերցնեն իրանց վրա և չը թողնեն, որ մնալով աւերի քայքայվի այդպիսի բարոյական, կրթական հիմնարկութիւնը:

Սուքիաս Գրիգորեանց

«ՓԱՄԲԱԿ» ՔԱՐԱՀԱՆՔԻ ԲԱՆՒՈՐՆԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

(Նամակ Փամբակից)

Յունվարի 8-ին

1905 թ. վերջերում, Թիֆլիսի քաղաքային դումայի որոշման համաձայն, սկսվեց մեր «Փամբակ» կոչվող քարահանքում քաղաքի փողոցները մայթելու համար կուբիկներ պատրաստելու աշխատանքը:

Դուման այդ ձեռնարկութիւնը կապալով տուել էր պ. Մուխուզլիին, իսկ վերջինս որոշ պայմանով յանձնել էր իտալացի Ջիլարդին: Սկզբում Ջիլարդիի ղեկավարութեամբ աշխատում էին միայն մի քանի հմուտ վարպետներ: Կարճ ժամանակամիջոցում այստեղ հաւաքվեց շրջակայ գիւղերից աղքատ և անգործ բանուորների մի ստուար խումբ:

Խորամանկ իտալացին մեծ ուրախութեամբ ընդունեց նրանց և շուտով այդ արհեստը նրանց էլ սովորեցրեց ու, օգտվելով նորեկների միամտութիւնից, սկսեց անխնայ շահագործել: Չափազանց ծանր էր նորեկների աշխատանքը. նրանք անընդհատ օրը վաղ առաւօտից մինչև երեկոյ անդադար ծանր մուրճով կռւում էին կարծր քարի հետ: Նրանք ամեն մի տաշած կուբիկի համար պէտք է ստանային միայն 5 կ.: Աղքատ բանուորը իր ֆիզիքական ամբողջ ույժը գործ էր դնում, որպէսզի մի քանի կոպէկ աշխատի իր քաղցած ընտանիքի թշուառ գոյութիւնը ապահովելու համար: Բայց դժբաղդաբար նա հազիւ էր այդ նպատակին հասնում: Նա աստիճանաբար կորցնում էր իր միակ հարստութիւնը—առողջութիւնը: Գիւղացի բանուորի առողջ մարմինը հետզհետէ հիւծվում, մաշվում է քարահանքի ծանր աշխատանքից, խոնաւութիւնից և ցրտից:

---

*) Ի նկատի ունենալով խնդրի կարևորութիւնը, տպում ենք Բարգէն վարդապետի այս յօդուածը:

Թշուառ բանուորը, հեռու իր ընտանիքից, ընկնում է անկողին, անխնամ, զուրկ բժշկական տարրական օգնութիւնից: Կապալառուն և նրա հաւատարիմ ստորադրեալ Ջիլարդին անխնայ շահագործում են իրանց թակարդը ձգած խեղճ բանուորներին: Բանուորի անմխիթար դրութիւնից նմանապէս սկսում է օգտվել տեղական մանրավաճառը: Կենսական մթերքների գինը եռապատիկ բարձրացնում է: Այդպիսով բանուորի վերջին կոպէկներն էլ ընկնում են ագահ մանրավաճառի գրպանը: Կեանքը դառնում է անտանելի: Ոգին վերջապէս ծնունդ է առնում նրանց մէջ: Դասակարգային շահերը միացնում են 60 բանուորներին: Եւ նրանք միացած ուժով կռիւ են յայտարարում իրանց ատելի շահագործողներին: Սկսվում է յամառ և երկարատև գործադուլը:

Բանուորները դնում են հետևեալ 3 պահանջները. ա) աւելացնել կուբիկների գինը. բ) բժշկական անհրաժեշտ օգնութիւն. գ) արգելել մանրավաճառներին մթերքներ թանգ վաճառելը:

Գլխաւոր կապալառու պ. Մուխուզլին, քաղաքային դումայի ներկայացուցիչների հետ միասին այցելում են քարահանքը և երկար բանակցութիւնից յետոյ ընդունում բանուորների առաջադրած պահանջները: Բանուորները վերջապէս ազատվում են իտալացի Ջիլարդիի խնամակալութիւնից: Նրանց իրաւունք է տրվում կազմել արտել: Կուբիկը գնահատում են 7 կ., իսկ համանուն պլատֆորմ տեղափոխելու ամբողջ ծախսը կապալառուի վրա: Խոստանում են բժշկական խղճուկ օգնութիւն և ուրիշ ոչինչ:

Այս անգամ բանուորները մեծ եռանդով կպչում են գործի: Երկու կողմերի պայմանի համաձայն, արտելը մի տարի ժամանակամիջոցում պէտք է պատրաստէ 400 հազար զանազան մեծութեամբ կուբիկներ: Արտելի անդամների թիւը հասնում է 130-ի:

Նախ և առաջ արտելը իր անդամների մի ամսվայ վարձը յատկացնում է հանքում ճանապարհ շինելուն, դարբնոց հիմնելուն և զանազան պակասութիւնների: Բանուորները մեծ սիրով կատարում են այդ զոհաբերութիւնը, յոյս ունենալով որ դրա փոխարէն գոնէ բաւարար կը վարձատրվեն:

Արտելը բաղկացած էր հայերից, ռուսներից և յոյներից: «Մէկը ամենքի համար, ամենքը մէկի համար» սկզբունքով էին նրանք առաջնորդվում: Նրանք եղբայրական սիրով և համերաշխութեամբ գործը առաջ էին տանում: Պայմանաժամը մօտ էր: Պատուէրը վերջանալու վրա էր: Գլխաւոր կապալառուն և նրա ստորադրեալները տեսան, որ բանուորական արտելը կամաց-կամաց դիպչում է իրանց «սրբութիւն սրբոցին»—յաւելեալ արժէքին: Բանուորական միութիւնը միշտ վնասել է շահագործողներին: «Բաժանիր, որ տիրես»: Ահա այս նշանաբանով նրանք սկսեցին բանուորական կազմակերպված ույժը թուլացնել: Նրանք արտելի մի քանի աչքի ընկնող վարպետներին գրաւում են իրանց կողմը: Վերջինները համարձակ դաւաճանեցին իրանց ընկերական ուխտին: Շուտով արտելը կազմալուծվեց: 130 բանուորները ծառ անգործ մնացին: Խորամանկ կապալառուն փակված յայտարարեց հին քարահանքը, իսկ բանուորներին՝ արձակված: Իսկ դաւաճան բանուորներին մի նոր հանք տուեց: Այժմ արձակված բանուորները 6½ կ. կուբիկը՝ պատրաստ էին, իսկ մինչև պլատֆորմ տեղափոխելու ծախսն էլ բանուորների վրա: 130 բանուորներից 100-ը մնաս բարև ասացին քարահանքին և ձեռքները ծոցը դրած հեռացան զանազան կողմեր:

Իսկ մնացած 30 բանուոր. սովի ուրուականից սարսափած գնացին և անձնատուր եղան վիշապ կապալառուին:

Պ. Մուխուզլին և նրա հաւատարիմ ստորադրեալները հասան իրանց նպատակին՝ 100 բանուոր մատնելով թշուառութեան, մի անգամ էլ կեանքի մէջ փորձելով «բաժանիր, որ տիրես» նշանաբանը:

Իսկ ինչ վիճակի մէջ են ներկայումս քարահանքում աշխատող ընկճված բանուորները:

Դրա մասին մի ուրիշ անգամ:

Գիւղական ուսուցիչ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Ամսիս 4-ին Բագւում վախճանված բնիկ ախալցխացի և Թիֆլիսի «Մութաֆեան» յայտնի առևտրական տան գլուխ Վահրամ Մութաֆեանի մահը, ինչպէս հաղորդում են Բագւի լրագիրները, մեծ ցաւ է պատճառել հասարակութեան մէջ, որովհետև հանգուցեալը մասնակցում էր հասարակական գործերին և բացի դրանից Իտալիայի հիւպատոսական գործակալ էր Բագւում: Նրա մարմինը այսօր Բագւից բերվելու է Թիֆլիս: Մեզ հաղորդում են այդ առիթով, որ հանգուցեալը մասնակցութիւն էր ցոյց տալիս հայոց թատրոնի գործին և անդամ էր «Ալւամբ» թատրոնական կոմիտէին: Այդ պատճառով Թիֆլիսի հայոց դրամատիկական ընկերութեան վարչութիւնը յայտարարել է իր նախագահին ցաւակցութիւն յայտնել վարչութեան կողմից հանգուցեալի ընտանիքին և ներկայ լինել յուղարկաւորութեան: Հարկաւոր ենք համարում յայտնել, որ հանգուցեալը մի ժամանակ թղթակցել է և «Մշակին», արտասահմանից, ուսանող եղած ժամանակ:

◆ Կովկասի Փոխարքան յանձնարարել է իր դիւանատան փոխ-վերատեսուչ Ստրատոնովին՝ լիակատար քննութիւն կատարել Զաքաթալայի շրջանի գործերի վերաբերութեամբ:

◆ Կովկասեան զինուորական-նահանգական դատարանը Լէչխումի գաւառի գիւղացի Կօնստ. Կօբալիանուն, Քութայիսի նահանգի Արաչա գիւղացի Ան. Կուտալաձէին և Շորապանի Գ. բնակիչ Եւ. Զարկվիանուն մահվան էր դատապարտել կախաղանի միջոցով՝ պօստի վրա յարձակում գործելու և երկու պահակների սպանելու համար: Դատարանի յիշեալ դատավճիռը երկրիս բարձր իշխանութիւնը հաստատել է:

◆ Թիֆլիսի էլեքտրաքարշի անօնիմ ընկերութիւնը, դիւրութիւն տալու նպատակով քաղաքիս ուսանողութեան, որ զանազան հեռաւոր թաղերից դպրոց է յաճախում, խնդրել է քաղաքային վարչութեան՝ թոյլատրել իրան էլեքտրաքարշի վագոնները պարկից արձակել առաւօտեան ժամը 6-ից և երթևեկութիւնը դադարեցնել երեկոյեան ժամը 10½-ին:

◆ Սօլօլակի գծի վրա, երկու ճանապարհներով, էլեքտրաքարշը կերթևեկէ հաւանօրէն փետրվարի սկզբին:

◆ Ի լրումն մեր տեղեկութեան, որ Թիֆլիսում ցանկալի դտան ցանել Ուրուգուայի գետնախնձոր (Soeanum Commersoni), այժմ կարող ենք աւելացնել, որ Թիֆլիսի բուսաբանական այգին արդէն մի շարք փորձեր է անում այդ ուղղութեամբ Կովկասի զանազան տեղերում, երկրագործութեան վարչութեան ցուցմունքների համաձայն:

◆ Յունվարի 9-ին, Գրբօգլավի նախագահութեամբ, արտա-դպրոցական կրթութեան ընկերութեան դասախօսների ժողովում վճռվել է դասախօսութիւնները սկսել յունվարի 14-ից:

◆ Թիֆլիսի նահանգապետը յունվարի 10-ին տեղեկացրեց քաղաքագլխին, որ նա թոյլատրում է այս յունվարի ընթացքում կատարել քաղաքային վարչութեան նախահաշւած ծախքերը, նախքան 1908 թ. նախահաշւի հաստատելը, միայն ծախքերից մի քանիսը դուրս հանելով կամ բոլորովին կրճատելով: Քաղաքի ծախքերի ընդհանուր գումարը հաւասարվում է 248,239 ր. 47 կ.: Վերջին կրճատումներով այս թիւը դառնում է 238,392 ր. 81 կ.:

◆ Քննելով Թիֆլիսի նահանգապետի առաջարկութիւնը՝ հասցէների սեղանը վերցնել քաղաքային ինքնավարութեան տնօրէնութեան ներքոյ, զինուորական դրութիւնը վերցնելուց յետոյ,—քաղաքային վարչութիւնը որոշեց մնալ դումայի՝ այդ հարցի առիթով կայացրած նախկին վճռի մէջ, այսինքն յիշեալ հաստատութիւնը քաղաքային ինքնավարութեան տնօրէնութեան տակ ընդունելը վաղաժամ համարել:

◆ Թիֆլիսի քաղաքային սանիտարական-բժշկական խորհուրդը վերջացրեց դումայական նախկին մասնաժողովի զեկուցագիրը՝ որ վերաբերում է սանիտարական-բժշկական մասը կանոնաւորելու խնդրին: Այս զեկուցագիրը մօտ օրերս կը ներկայացվի քաղաքային վարչութեան խորհրդի եզրափակման հետ միասին՝ դումա մտցնելու համար:

◆ Թիֆլիսի քաղաքային սանիտարական-բժշկական խորհուրդը մշակում է պարտադիր որոշումների մի նախագիծ Թիֆլիսի բաղնիքների համար և մի նախագիծ էլ, որի ցոյց տուած կանոններով ազգաբնակութիւնը օգտվելու է յիշեալ բաղնիքներից:

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը յանձնարարել է ուտեստեղէնների վրա հսկող մարմին՝ ստուգել թէ պանդոկապաններից, և գինետներից ով չէ տուել տուրքերը այս 1908 թ. համար:

◆ Յունվարի 10-ին մի յատուկ մասնաժողով, բաղկացած քաղաքի, քաղաքային վարչութեան շինարարական բաժնի, պօստ-հեռագրական վարչութեան և էլեքտրաքարշի անօնիմ ընկերութեան ներկայացուցիչներից երկրորդ անգամ դիտեց էլեքտրաքարշի Նաւթլուղի գիծը, որը գտաւ կարգին: Մասնաժողովը հնարաւոր համարեց թոյլատրել երթևեկութիւնը այդ գծի վրա մինչև Նաւթլուղի այգին: Գծի շարունակութեան կառուցանելը արդէն աւարտված է մինչև քաղաքային սպանդանոցը:

◆ Յունվարի 9-ին «Свѣтъ» նաւթային ընկերութեան պահեստի բանուորների ամբողջ կազմը գործադուլ արեց, ներկայացնելով ընկերութեանը տնտեսական մի շարք պահանջներ: Իշխանութեան կարգադրութեամբ բոլոր գործադուլները, որոնք թւով 17 հոգի են, յունվարի լոյս 10-ի գիշերը ձերբակալվեցին:

◆ Թիֆլիսի առևտրական բանկի պահեստի բանուորների գործադուլը վերջացաւ: Արձակված չորս բանուորները ստացան 700 րուբլի բաւարարութիւն: Մնացած ընկերները աշխատանքի կպան:

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը խնդրել է ոստիկանապետին կարգադրութիւն անել, որ բեռնակիր կառքերը չերթևեկեն Վօզնէսէնսկի, Րտիշչէվսկի և Լերմօնտովսկի փողոցներով, ուր էլեքտրաքարշն է անցնում:

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութեան անդամ Ա. Խատիսեանը մթերքների և ուտեստեղէնի վրա հսկող գլխաւոր կառավարչին ուղարկել է 15 օրինակ այն պարտադիր որոշումներից, որ վերաբերում են քաղաքային էլեքտրաքարշի պահպանութեան կարգին և խնդրել, որ այդ որոշումները բաժանէ իր օգնականներին այնպէս, որ յիշեալ որոշումները խախտելու իւրաքանչիւր դէպքում կարելի լինի արձանագրութիւն կազմել: Ընդսմին շինարարական բաժինը խնդրում է ի նկատի ունենալ պարտադիր որոշումների 18-րդ կէտի ծանօթութիւնը, որի հիման վրա էլեքտրաքարշի վարչութիւնը պարտաւոր է ճանապարհորդական գնացքների գալու ժամանակ աշխատեցնել երեք վագոններ, որոնք սպասելու են ճանապարհորդներին մինչև գիշերվայ ժամը 12-ը: 2 վագոն մինչև Երևանեան հրապարակը Նիկօլաեվսկի կամուրջի վրայով և 1 վագոն Վերայի կամուրջի վրայով, որոնք վերադառնում են կրկին նոյն գծերով:

◆ Թիֆլիսի ութերորդ ոստիկանատան պրիստաւ Դուշինսկու 10-ամեայ ծառայութեան համար, Կովկասի Փոխարքան թոյլատրել է ամեն տարի յաւելեալ ռոճիկ տալ 300 րուբլի:

◆ Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան ծառայողների մի խմբակ, նպատակ ունենալով մերձեցնել քաղաքային բոլոր ծառայողներին միմեանց, մտադրութիւն ունի հիմնել գրական-երաժշտական շրջան, որ հետամուտ լինի իրականացնել իր նպատակը հետևեալ միջոցներով. 1) դասախօսութիւններ, ռեֆերատներ, զրոյցներ, զեկուցումներ, ընթերցանութիւններ կազմակերպելով, մոգական լապտերներով և այլն. 2) գրական-երաժշտական երեկոյթներով և ցերեկոյթներով. 3) ներկայացումներ և համերգներ տալով. 4) գրադարան և ընթերցարան բանալով. 5) գրագիտութեան դասընթացքներ հիմնելով. 6) երեխաների խաղեր, քաղաքից դուրս զբօսանքներ կազմակերպելով թէ երեխաների և թէ հասակաւորների համար, միացնելով յիշեալ զբօսանքները կրթական նպատակին, այլ և կառավարութիւնից թոյլ տուած խաղերով (բացի թղթախաղից և լօտօյից). 7) ֆիզիքական վարժութիւններ կատարելով. 8) էժանագին և ձրի ճաշարաններ և սպառողական ընկերակցութիւններ հաստատելով: Շրջանի միջոցները մտադրութիւն կայ ժողովել ամենամեայ անդամակցական վճարներով հետևեալ հաշւով. մինչև 360 րուբլի ստացողից—1 ր., 360-ից մինչև 720 ր. ստացողից՝ 2 ր., 720—1000 ր.՝ 3ր., 1000-ից աւելի ստացողից 6 ր.: Ներկայումս այդ հիմունքներով արդէն մշակված է կանօնադրութիւն, որը կը ներկայացվի պատշաճաւոր իշխանութեան ի հաստատութիւն:

◆ Վրաց թեմի թեմական օրգանը այս տարի լոյս չի տեսնի:

◆ Քութայիսի նախկին նահանգապետ Վ. Ա. Ստարօսէլսկին ներկայումս ապրում է Եկատերինօդարում: Մօտ օրերս Եկատերինօդարի քաղաքային վարչութիւնը ընտրեց նրան հիւանդանոցի կառավարիչ, բայց շրջանի պետը հրաժարվեց հաստատել նրան: Միաժամանակ մի հետաքրքիր տեղեկութիւն է ստացվել, որ Ստարօսէլսկին հանդիսանում է Պօլուբոտկինի անմիջական ժառանգներից մէկը և, հետևաբար, կարող է յոյս դնել նրա խոշոր ժառանգութիւնից բաժին ստանալու վրա: («Б. В.»)

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը Լանդէզէնից առաջարկութիւն էր ստացել մասնակցել Պետերբուրգում իր բացած քաղաքային գործերի տեղեկատու գրասենեակի գործունէութեան: Քաղաքային վարչութիւնը յունվարի 10-ին յայտնեց իր համաձայնութիւնը:

◆ «Зак.» յայտնում է, որ յունվարի 5-ից Բաթումից Կովկասի զանազան տեղերն են ուղարկել 42 քաղաքական բանտարկեալների:

◆ Օզուրգէթի գաւառի Նասկվէլի-Սուլի գիւղում, ինչպէս հաղորդում են, վրէժխնդրութիւնից սպանել են գիւղական տանուտէրին և գրագրին:

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

◆ Նաւթարդիւնաբերողների համագումարի խորհուրդը պօստ-հեռագրական գլխաւոր վարչութիւնից իրաւունք է ստացել բանալ Սաբունչի քաղաքում և Բիբի-Էյբաթում IV կարգի պօստ-հեռագրական գրասենեակներ, որոնց բոլոր ծախքերը հոգալու է նաւթարդիւնաբերողների համագումարի խորհուրդը:

◆ Բագւի քաղաքագլխի առաջ միջնորդութիւն է յարուցված Բագւի բանտին կից ախտահանիչ կամերա հիմնելու համար: Այս կամերան շատ անհրաժեշտ է ինչպէս խոլերայի համաճարակի ժամանակ, այնպէս և առհասարակ, մանաւանդ որ բանտում տեղի են ունենում շարունակ վարակիչ հիւանդութիւններ:

◆ Բագւի սանիտարական-գործադիր մասնաժողովը որոշել է տպագրել և բաժանել մասնաժողովի անդամներին մասնաժողովի՝ խոլերայի դէմ երևան հանած իր գործունէութեան հաշիւը, մանրամասնելով գործադրած միջոցները և հետևանքները:

◆ Բագւում դեղատուն ունեցող Զախարենկօին թոյլատրված է վաճառել թունաւոր իրեր:

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ախալքալաք, 29 դեկտեմբերի

Ախալքալաքի երկսեռ դպրոցի ուսուցիչները—ամսիս 25-ին ժողով գումարելով և միացնելով իրանց ձայնը Մօզդօկի ուսուցչական խմբի բողոքին (տես «Մշակ» № 185)—որոշեցին լրագրութեան յանձնել հետևեալը.

Համաձայն «Կովկասի հայոց դպրոցների ուսուցիչների և վարժուհիների միութեան» կանօնադրութեան 13-դ յօդուածի՝ միութեան ճիւղ կազմող անդամների թիւը առնուազն 15 պիտի լինի. այդ յօդուածը մեծ դժուարութեան մէջ պէտք է դնէ մեր գաւառական ուսուցչական խմբերից շատերին ճիւղ կազմելում. քիչ գաւառ կարելի է ցոյց տալ, որտեղ գոնէ 15 ուսուցիչ լինեն. օրինակ, Ախալքալաքի պէս հայաշատ քաղաքի դպրոցը 12 ուսուցիչ ունի միայն. ամբողջ՝ համարեա զուտ հայաբնակ գաւառը չունի գոնէ 3 դպրոց, որոնք հնարաւորութիւն տային տեղիս ուսուցչական խմբին ճիւղ կազմելու. նոյն պայմանների մէջ են գտնվում, մեր կարծիքով, նաև Մօզդօկի, Արդահանի և մի շարք այլ գաւառների ուսուցիչները: Շնորհիւ այդ յօդուածի շատերը, հակառակ իրանց ցանկութեան, զրկված են լինելու միութեան մէջ մտնելուց և առաջիկայում կայանալի կենտ. ընդհ. ժողովին մասնակցելուց:

Վերոգրեալի վրա հրաւիրում ենք կենտր. ընդհ. ժողովի ուշադրութիւնը:

Խնդրում ենք արտատպել միւս թերթերին:

Նախագահ ժողովի՝ Տ. Տօնականեան

Քարտուղար՝ Լ. Բունիաթեան

—

Թիֆլիս, 4 յունվարի

Հաւլաբարի թատրոնում, դեկտեմբերի 30-ի հայերէն ներկայացման րեցենզենտը—«Ականատես» ստորագրութեամբ—յունվարի 3-ին «Վտակ» լրագրում իր գրած րեցենզիայում ի միջի այլոց յիշում է, որ այդտեղի ծառայողները ի փառս սօցիալ-դեմօկրատ. դրօշի կազմել են մի արտել, պահում են բուֆէտ և, վաճառականական տեսակէտից դրդված, չեն թողնում, որ երաժշտութիւնը նուագէ դահլիճում, և ի միջի այլոց անուանում է նրանց աւազակներ:

Այդ բոլորը այնքան զուրկ է ճշմարտութիւնից, որքան երկու անգամ երկուսը չէ կարող քսանեօթը լինել... Ուստի և աւելորդ չենք համարում բացատրութիւն տալ թէ պ. րեցենզենտին և թէ այն հասարակութեանը, որին նա հրաւիրում է աչքի առաջ ունենալ թատրոնը վարձելիս:

Իրողութիւնը հետևեալն է.

ա) Թատրոնի դահլիճը երաժիշտների համար առանձին տեղ չունի, և նրանք պէտք է նստեն հասարակութեան առաջ, միևնոյն բարձրութեան վրա, որով խանգարվում է բեմին նայելը:

(Առանձնապէս, յատուկ երաժիշտների համար տեղ շինված է հէնց սկզբից ներքևի փօյէում և դրա մէջ մենք մեղաւոր չենք):

բ) Այդ ներկայացման առաջին օրը ներկայացնում էին էլեքտրաքարշի ծառայողների սիրողները, և դիրեկտոր Փրիդմանը ինքը ականատես եղաւ, թէ ինչ խառնակութիւն է լինում՝ եթէ երաժիշտները ածում են դահլիճում, խառնվում են ժողովրդի մէջ և իրանց ահագին գործիքներով խանգարում են ժողովրդին նայել բեմի վրա:

Յանուն թատրոնի կարգ ու կանոնի, մենք ստիպված ենք թոյլ չը տալ, որ թատրոնի դահլիճը դառնայ իսկապէս մի շուկայ:

Մենք այնտեղ ոչ յիշել ենք մեր սօց.-դեմօկրատութիւնը և ոչ դաշնակցականութիւնը, ուստի և յարգելի պ. րեցենզենտ-ականատեսին նախ խորհուրդ կը տանք լինել միշտ անաչառ և երկրորդ առաջարկում ենք հրապարակով յետ վերցնել մեզ ուղղած իր «աւազակ» խօսքը, այլապէս մենք նրան հրաւիրում ենք միջնորդ դատարանի:

Թատրոնի ծառայողներից՝

Յովհաննէս Սարեան, Գ. Ասլամազեան, Նիկօլա Նիկողոսեան, Микиртумовъ, Иванъ Тер-Гевондовъ, Արտա Ջետխաղեան:

—

Երևան, 9 յունվարի

«Եղբ. Վ. և Յ. Մութաֆեան» առևտրական տան պաշտօնեայ լինելով՝ հանգուցեալ Վահրամ Մութաֆեանի յիշատակը յարգելու համար պսակի փոխարէն ուղարկում եմ յարգելի խմբագրութեանդ 15 ր. ի նպաստ Թիւրքահայ սովեալների:

Առաքել Աւագեան

—

Թիֆլիս, 11 յունվարի

Իմ սրտակից և անկեղծ բարեկամ հանգուցեալ Վահրամ Մութաֆեանի անմոռաց յիշատակը փոխանակ պսակով յարգելու, խնդրում եմ յարգելի խմբագրութեանդ ներփակեալ քսան րուբլին յատկացնել ի նպաստ Կովկասի հայ աղէտեալների:

Մովսէս Թաւաղեանց

—

Թիֆլիս, 11 յունվարի

Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերութեան վարչութիւնը տօների առիթով ստացել է դրամով և մթերքներով հետևեալ նուիրատուութիւնները.

1) Տիկին Մարգարիտ Միխ. Աբեանից 50 րուբլի, որբանոցի տօնածառի և աշակերտական ներկայացման ծախսերի համար:

Յօգուտ աղքատների. 2) գիմնազիստ Դ. Կարաջեանից 1 ր. 55 կ., 3) Մ. Առաքելեանից 10 ր., 4) փոքրիկ Եղուարդ Կաֆեանից 5 ր., 5) գիմնազիստ Արտաւազդ Մելիք-Փարսադանեանից 3 ր. 50 կ., 6) տիկ. Եղիսաբէթ Բարանասեանից 5 ր., 7) մի անյայտից 50 ր., 8) Մ. և Ե. Զանշեաններից 10 ր., 9) Մի Թիֆլիսեցի պարոնից 10 ր., 10) «Մշակի» խմբագրութեան միջոցով 15 ր.:

Ընկ. ձրի աշակերտական ճաշարանի համար. 1) պ. Քամօյեանից 10 փ. դօշ և 2) պ. Զէգեվէլօվից 20 փ. սուզակ:

Բացի այդ, մի ոմն, որը չէ ցանկանում յայտարարել իր անունը, ընդունել է ընկերութեանս օգնութեան դիմող 14 աղքատների կարիքները լրացնել այս տօներին: Ընդամենը ընկերութիւնը ստացել է նուիրատուութիւններ դրամով 160 ր. 25 կ. և բաժանել է աղքատներին 200 ր. 05 կ., որից 25 ր. Հաւլաբարի կիսօրեայ չքաւոր աշակերտներին:

Վարչութիւնը պարտք է համարում յայտնել իր խորին շնորհակալութիւնը բոլոր նուիրատուներին:

Նախագահ վարչութեան՝
Ս. Յարութիւնեանց
Քարտուղար-անդամ վարչութեան՝
Ռ. Խանազատեանց

—

Թիֆլիս, 11 յունվարի

«Եղբ. Վ. և Յ. Մութաֆեան» Ջուլֆայի առևտրական տան պաշտօնեայ պ. Համազասպ Սաֆրազեան, հանգուցեալ Վահրամ Մութաֆեանի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն, հետագրած է յանձնել յարգելի խմբագրութեանդ 20 ր., որն ընդ սմին ձեզ ուղարկելով՝ խնդրում եմ յատկացնել ի նպաստ Թիւրքահայ սովեալների:

Յ. Զաթուլպաշեան

—

Թիֆլիս, 11 յունվարի

Անգութ մահը վաղաժամ խլեց իմ թանգագին եղբօր՝ Վահրամ Կարապետեան Մութաֆեանի կեանքը: Ցանկալով յարգել հանգուցեալի յիշատակը, պսակի փոխարէն ուղարկում եմ յարգելի խմբագրութեանդ 25 ր., խնդրելով իմ գերդաստանի կողմից այդ լուման յատկացնել Թիւրքահայ եղբարց կարօտեալներին, որոնց խնամելը եղած էր միշտ հանգուցեալի ամենօրեայ հոգսը:

Տիկին Սօֆիա Ղազարեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

I

Թէհրան, 29 դեկտեմբերի

Իբրև շարունակութիւն նախորդ նամակիս, շտապում եմ գրել, որ ամսիս 10-ից յետոյ աչքի ընկնող ոչ մի դէպք չէ պատահել: Լրագիրների հաղորդած այն հեռագրական լուրը, թէ իբր մէջլիսը շրջապատված է եղել և ռմբակոծութեան ենթարկվել կանոնաւոր զօրքի կողմից, միանգամայն սուտ է և հնարովի: Եթէ այդպիսի մի բան տեղի ունեցած լինէր, անշուշտ, դէպքի յաջորդ օրը վաղ և անհուն հետաքրքրութիւնը մեզ կուղարկէր տեսնելու նրա փլատակները:

Պարսկական պալատի առաջ ներկայումս դրված է մի շատ կարևոր և ծանրակշիռ խնդիր: Դա ներկայ Մահմեդ-Ալի շահի գահընկէցութեան խնդիրն է և նրա հօրեղբայր Զիլլի-Սօլթանի միջամտութիւնը այդ գործում: Տիրող ընդհանուր կարծիքն այն է, որ Զիլլի-Սօլթանը հակվել է մէջլիսի կողմը, մեծ քանակութեամբ դրամ և ադամանդներ է հայթայթել նրան և նոյնիսկ իր երկու որդիներին՝ իբրև ֆիդայի՝ դրել է նրա տրամադրութեան տակ այն փոխադարձ պայմանագրի հիման վրա, որի զօրութեամբ պէտք է գահընկէց լինէր Մահմեդ-Ալի շահը և թագաւոր յայտարարվէր մանուկ գահաժառանգը Զիլլի-Սօլթանի անմիջական խնամակալութեան և հովանաւորութեան տակ: Այդպիսով պիտի ստացվէր այն, որ ազատասէր մէջլիսը գահընկէց անելով մի բռնապետի, թագաւորական գահի վրա պիտի բազմեցնէր նրանից աւելի դաժան և անագորոյն մի բռնապետի ի դէմս խնամակալ Զիլլի-Սօլթանի: Կարծում ենք, որ բացի այդ՝ այլ կերպ չէ կարելի բացատրել Զիլլի-Սօլթանի վարմունքը մինիստրական կաբինետի նախագահ Նիզամ-էս-Սալթանէի հետ, երբ սա գնացել էր յայտնելու նրան շահի համաձայնութիւնը նրա՝ արտասահման ուղևորվելու համար:

Մէջլիսի հետ, ինչպէս երևում է, համամիտ է նաև Նէջէֆի կօմբինացիան: Վերջինս մի տեսակ հաւանութիւն է տալիս առաջինի կարգադրութիւններին և ցանկութիւններին: Նա նոյնիսկ վերջերս իր մի հեռագրով «անօրէններ» անուանեց միապետական մուշտէիդ շէյխ-Ֆէյզուլլային և նրա հետևորդներին:

Բազմաթիւ քաղաքներից մէջլիսականների կողմից իրար յաջորդող հեռագիրներն ևս այդ հանգամանքն են շեշտում ու նրա վրա ծանրանում, այն է՝ պահանջում են Մահմեդ-Ալի շահի գահընկէցութիւնը իբրև ուխտադրուժի և երդմնազանցի սահմանադրութեան դէմ:

Պալատն, այսպիսով, ընկել է կրիտիքական դրութեան մէջ և օրհասական գալարումներ և ցնցումներ է անում: Պետական բոլոր քիչ թէ շատ աչքի ընկնող մարդիկ հակված են մէջլիսի կողմը, շահի շուրջը ծւարած թողնելով ապիկար և անվստահելի մարդկանց փոքրաթիւ մի խումբ: Զօրքն էլ, փոխանակ վստահութեան յուսադրիչ նշանների, տալիս է անվստահութեան փայլուն ապացոյցներ, ինչպէս օրինակ արտիլլերիստների հրաժարվելը զինուորական ընդհանուր դիսցիպլինային հնազանդվելու և այլն:

Գիտակցելով իր ույժի տկարութիւնը և իր վիճակի անել լինելը, Մահմեդ-Ալի շահը դիմել է խորամանկ միջոցի, այն է՝ հիւանդ ձևանալով առ ժամանակ հրաժարվել է զբաղվելու օրվայ հրատապ և այրող խնդրով, իր լինել չը լինելով: Բորբոքված գործը՝ ամբոխի և մէջլիսի միջև ծագած պայքարը այսպիսով մնացել է առկախ վիճակի մէջ, մինչև որ շահը կազդուրվի և դարձեալ ձեռք առնի իր առաջ դրված քնած, բայց դեռ չը մեռած պրոբլեման:

Շահի այս խորամանկութիւնը,—ինչ անել կուզի որ,—որոշ չափով եղել է նրպաստառը իր համար։ Խնդրի առկախ լինելուց օգուտ քաղելով Անգլիայի և Ռուսիայի դեսպանները՝ օգնութեան են հասել ընկնող Թագաւորին, գոնէ առերևոյթ, մի տեսակ համաձայնութիւն առաջ բերելով նրա և մէջլիսի միջև, որի հետևանքն է, որ սանձահարվել և զսպվել են բորբոքված կրքերը։

«Թօփխանէ» հրապարակում այլ ևս զօրք չէ երևում. բանակը յետս է կոչված։ Բարոյական յաղթանակի պատիւը, ուրեմն, պատկանում է մէջլիսին։

Ներկայումս քաղաքում տիրում է մի տեսակ խաղաղութիւն և փարատված են երևում ահն ու երկիւղը։ Սակայն դարձեալ կողմերից և ոչ մէկը ձեռքից չէ տալիս իր զգուշութիւնը։ Այսպէս՝ նրանք օր օրի վրա ստուարացնում են իրանց շարքերը, մէկը՝ Ղազվինից վրա հասած մէջլիսականներով, իսկ միւսը՝ հետզհետէ ժամանող հեծելազօրքով։ Թւում է թէ՝ գոյութիւն առած տարաձայնութիւնը դեռ բոլորովին փարատված չէ։

Անցեալ օրերը լուր տարածվեց, որ մէջլիսը արդէն արձակել է բոլոր անջումաններին. մի հանգամանք, որ կազմում է շահի պահանջների մի կէտը. սակայն միւս կողմից էլ յամառօրէն սկսեցին խօսել բազարի փակման և նոր խառնակութեան հաւանականութեան և կարելիութեան մասին։ Մարդ դժուարանում է հասկանալ, թէ առկախ մնացած խնդիրը մինչև որ աստիճան է լուսաբանված և թէ՝ փոխադարձ համաձայնութիւնը որ մէկ կէտի վրա է կանգ առել։

Մինչև այսօր մէջլիսը քաջաբար դիմադրել է պալատում նիւթվող բոլոր խարդաւանքներին։ Ինչպէս երևում է, նա վստահ է իր ոյժերի վրա։

Տարօրինակ է Պարսկաստանի մէջլիսը։ Դա միակ պարլամենտն է ամբողջ աշխարհում, որ չունի իր կենտրոնը և, որ գլխաւորն է, իր աջակողմը։ Նրա ամբողջ կազմը բաղկացած է ընդդիմադիր, դժգոհ, բողոքող և պահանջկոտ տարրերից։ Այդ տարրերի մէջ առաջնակարգ տեղ բռնում են ֆէօդալները, արիստոկրատները և ֆանատիկոս հոգևորականները, երեքն էլ ազգաբնակութեան արիւնը քամողներ, երեքն էլ ընչաքաղցներ և ժողովուրդ-մասսայի աշխատանքը ընդգրպանողներ։ Այդպիսի մի կազմ ունեցող մէջլիս, անտարակոյս, շատ էլ տոգորված չի լինի բարիք առաջացնելու մեծ գործով և այնքան էլ տրամադիր չի լինի երկրի մէջ իրաւակարգ մտցնելու ու ժողովրդի բարօրութեան տեսակէտից օգտակար քայլեր վերցնելու։ Եւ իրօք, պարսկական մէջլիսը իր երկամեայ գոյութեան ընթացքում ոչինչ չէ արել ժողովրդի համար։

II

Օրվայ նորութիւններ

◆ Ալա-էդ-Դօվլէն արդէն վերադարձել է աքսորից։ Անցեալ օրը գնաց պալատ, ներկայանալու շահին։

◆ Ամսիս 25-ի գիշերը մօտ 8 հոգի ոճրագործներ մտնելով Ջահանեան առևտրական տան կառավարիչ արբաբ Ֆրէյդունի բնակարանը, դաշոյնի մի քանի հարուածներով՝ հասցրած գլխին և կողին՝ մահացնում են նրան։ Ինչպէս յետոյ հանգուցեալի կինն է պատմել, արբաբ Ֆրէյդունն աղաչել է նրանց խնայել իրան՝ առաջարկելով իր մօտ գտնված առձեռն 524 թումանը և իր ունեցած-չունեցածը։ Սակայն նրանք՝ ոճրագործները առարկել են, որ իրանք գողեր և աւազակներ չեն, այլ որոշ յանձնարարութիւն կատարողներ։ Նրանք վիրաւորել են նաև սպանվածի կնոջ մէկ ձեռքը, երբ վերջինս աղաչել-պաղատելիս է եղել իր ամուսնու կեանքի փրկութեան համար։ Ասում են, որ արբաբ Ֆրէյդունը սպանվել է իր՝ մէջլիսի տրամադրութեան տակ բաւական քանակութեամբ հրացան դնելու համար։ Հանգուցեալը վերին աստիճանի համեստ, ազնիւ և բարեսիրտ անձնաւորութիւն էր, յաղթանդամ և առողջ կազմուածքով։

◆ Վերոյիշեալ դէպքի յաջորդ գիշերը դարձեալ մօտ 8 հոգի չարագործներ՝ զինված յարձակումն են գործում Մուշիր-ուդ-Դօվլէի բնակարանի վրա։ Վերջինիս ծառաները արթնանալով՝ դիմում են զէնքի, որոնց հրաձգութիւններով ընդդիմադրում են չարագործները։ Հրացանաձգութիւնը տևում է մի քանի րոպէ։ Ասում են, որ չարագործների նպատակն է եղել սպանել Մուշիր-ուդ-Դօվլէին։

◆ Այսօր երեք օր է, որ ձիաքարշը դադարեցրել է իր երթևեկութիւնը։ Պատճառը երկու կերպ են բացատրում—ծառայողների գործադուլով և պայմանամիջոցի վերջանալով։

◆ Ռուսաց բանկը ընդլայնել է իր գործունէութեան ասպարէզը մի շարք նոր ճիւղեր բանալով Մազանդարանի և Սպահանի նահանգներում։ Ներկայացուցչութիւնը այդ երկու նահանգներում յանձնված է Եաւ. Ս. Ռօզենբլիւմին, որը միաժամանակ ներկայացուցիչ է նաև Լօձի վաճառական Ադամ Օսսերի և հիմնադիր-անդամ «Ռօզենբլիւմ և ընկ.» ընկերութեան։

Ս. Մուրադեան

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ

(Հեռագրական)

ՔԻՇԻՆԵՎ։ Հանգուցեալ Շմիտօվի փոխարէն Դումայի անդամ ընտրվեց Սօրօկի քաղաքագլուխ Նիկօլայ Միխայլօվիչ Սօլտու, 45 տարեկան, գաւառական դպրոցն աւարտած, ուղղափառ մօլդավացի, Բեսսարաբիայի կենտրօն. կուսակցութեան անդամ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Սէմիպալատինսկի նահանգապետ գեներալ-մայօր Գալկինը նշանակված է Սամարղանդի շրջանի զինուորական նահանգապետ։ Պաշտօնից արձակվում է Տաշկենդի շրջանի զինուորական նահանգապետ և զօրքերի հրամանատար Գ. Լ. Լոմաչէվսկին։

ՄՕՍԿՎԱ։ Բացվեց մանր կրեդիտի ներկայացուցիչների համագումարը։

ԲԵՐԼԻՆ։ Րէյխստագ։ Ամբիօնները և դահլիճը լի են։ Կառավարական նստարաններում են Բիւլօվը, Բէտմանը, Գօլվեցը, ֆօն Շէնը։ Հերթին դրված է սօցիալ-դեմօկրատների յայտարարութիւնը՝ կայսերական րէյխստագի ընտրութիւնների համար մտցրած ընտրողական սիստեմը դաշնակցութեան պետութեան վրա տարածելու մասին։ Կայսերական կանցլէրը խօսք առնելով, դահլիճի ընդհանուր լռութեան մէջ, հետևեալ յայտարարութիւնն արեց. «Ես մերժում եմ քննել պրուսական լանդտագի ընտրողական սիստեմը փոփոխելու հարցը, քանի որ դա մտնում է սոսկ Պրուսիայի օրէնսդրական մարմինների իրաւասութեան շրջանը և վերաբերում է պրուսական պետութեան ներքին գործերին»։ (Աջակողմը ծափահարում է, սօցիալ-դեմօկրատները բողոքում են)։

Հարցապնդման երկրորդ մասի առիթով, թէ արդեօք կայսերական կանցլէրը հաւանում է այն բանը, որ դեկտ. 30-ին զօրանոցներում կենտրօնացրած էին զօրքեր, Բիւլօվը ասաց. «Բեռլինի ոստիկանութիւնը, համաձայն օրէնքի, իր պարտականութիւնների հիման վրա, դեկտ. 30-ին հակադիր միջոցներ ձեռք առաւ փողոցային անկարգութիւնների դէմ։ Զօրանոցներում զօրքեր պահվում էին զինուորական իշխանութեան կարգադրութեամբ, որպէսզի օրինական կարգը պահպանեն առաջին իսկ հրաւէրով։

«Ես պէտք է մերժեմ հարցապնդմանը պատասխանելու։ Երէկ վերստին ամբոխի միջից ցուցարարները ընդհարվեցին ոստիկանութեան հետ, որի ժամանակ հարկ եղաւ զէնքի դիմել։ Այդ միջնադէպերի առիթով ես, իբրև կայսերական կանցլէր, լուրջ խրատներ պիտի ուղարկեմ երկրին։ Քաղաքականութիւնը փողոց դուրս բերելը բնաւ գերմանական սովորութիւն չէ»։ (Աջակողմը անվերջ ծափահարում է, սօցիալ-դեմօկրատների կողմից բարձրանում է աղմուկ)։ Բիւլօվը շարունակում է. «Հասարակական կարգ ու կանոնի պահպանութիւնը պարտադիր է իւրաքանչիւր քաղաքացու համար. ստիպել յարգել օրէնքը, թէկուզ դրա համար հարկաւոր լինէր ոյժի դիմել,—իշխանութեան պարտականութիւնն է ինքնին։ Հասարակական կարգը խախտելու ձգտող ամեն մի փորձ պէտք է ընդդիմադրութեան բախվի։ Մենք չենք հանդուրժի, որ ագիտատօրները բողոքներ յայտնեն փողոցի վրա իշխելու։ Օրհասական սխալ կը լինի մտածել, թէ մասսաների մէջ խառնաշփոթութիւն, մոլորութիւն մտցնող ցոյցերը կարող կը լինեն որևէ բան պոկել կառավարութիւնից, որ գիտակցում է իր պարտականութիւնը գեղեցիկ կերպով։ Դա ոչ մի տեղ և Գերմանիայում երբէք չի լինի։ Ես հաւատացած եմ, որ բոլոր բիւրգերական կուսակցութիւնները միահոգի կը դատապարտեն և կը մերժեն այդ վտանգաւոր անկարգութիւնները։ Սօցիալ-դեմօկրատական կուսակցութիւնը իր ցոյցերով երկրման և թեք կացութեան մէջ դրեց իրան։

«Դիմում եմ երկրի բանուոր ազգաբնակութեան լուրջ նախազգուշութեամբ, որ բղխում է բարեացակամ սրտից,—թոյլ չը տալ իրան դուրս գալ օրէնքի և կարգ ու կանոնի ճանապարհից, չը զոհել իրան յանուն կուսակցական ֆանատիկոսների և դրդողների։ Յետագայում թերևս ծագող հետևանքների համար պատասխանատու կը հանդիսանան ոչ թէ իշխանութիւնները, այլ դրդողները և ապստամբները»։ (Բուռն ծափահարութիւններ աջակողմում)։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ս. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. Կ. ԽՕՆՆԵՎԱ—9½—2 ժ. ատամի հիւ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

Ներկ. № 3
Հաւլաբարի թատրօն
(Նախկին Արաբեանի)
Յունվարի 13-ին
ՀԱՅ ԲԵՄԻ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԸ
կը ներկայացնեն
I
ՇՈՒՇԱՆԻԿ
Պատ. դրամա 3 գործ. հեղ. Կարինեանի
II
Դալալ Ղաղօ
Վօդ. 1 գործ. հեղ. Տէր-Գրիգորեանի
Մասնակցում են. տ. Զարէլ, օր. Անահիտ, պ. պ. Միրզոյեան, Տէր-Առաքելեան, Սանթուրճեան, Ղազարեան, Սափարեան, Նոնիկեան և ուրիշ.
Տեղերի գները 1 ր. 50 կ. մինչև 30 կոպ.
Սկիզբը 8 ժամին երեկոյեան
Ռեժիսեօր՝ Միրզոյեան
Հերթ. կարգադրիչ՝ Տէր-Առաքելեան

Լոյս տեսաւ և ուղարկվեց բոլոր բաժանորդներին
Ուշարար
Թատերական - գրական - գեղարուեստական պատկերազարդ երկշաբաթաթերթի № 13-ը հետևեալ բովանդակութեամբ.
Խմբագրութեան կողմից.—Երեմեան.—Նոր-Տարի.—Սմբատ Շահազիզ.—Յ. Աբէլեանի յոբելեանը.—Ժողովրդ. մօտիւներ.—Նիւթեր հայ թատրօնի պատմութեան համար. —Սեւերային սօսափներից.—Թիֆլ. դերասան. ընկ. ներկայացումները. — Բանաստեղծութիւն. —Նամակ խմբագրութեան.—Ներկայացումներ.—Լուրեր. — Յայտարարութիւն. Այս համարի հետ ուղարկվեց նաև Գ. Սունդուկեանցի «Բաղնըսի Բօղչայ» պիէսի մասը՝ իբր IV յաւելուած։
Բաժանորդագրութիւնը շարունակվում է 1907—8 թ. (մինչև մարտ, 18 պատկերազարդ համար և 9 պիէս)։ Տարեկան գինն է 5 ր.։ Նոր բաժանորդները կը ստանան բոլոր լոյս տեսած համարներն ու յաւելուածները։ Հասցէն՝ Тифлисъ. Ред. „Ушараръ"

Բացված է 1908 թ. բաժանորդագրութիւնը
(ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)
„ՀԱՍԿԵՐ"
ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ
Ամսագիրը լոյս է տեսնելու Թիֆլիսում 32—48 երեսանոց մեծադիր գրքոյկներով, նախկին ընդարձակ ծրագրով՝ մշտական աշխատակցութեամբ Յովհ. Թումանեանի։
«ՀԱՍԿԵՐԻՆ» համակրող ծնողների մի շրջանի ձեռնտուութեամբ խմբագրութիւնս հնարաւորութիւն է ստանում աւելի ճոխացնելու ամսագրի բովանդակութիւնն ու պատկերները։ 1908 թ. լոյս են տեսնելու, ի միջի այլոց, Աւ. Ահարոնեանի «Գունատ տղայ», Լէօի «Մեր բակի կեանքից», Յովհ. Թումանեանի հեքիաթները, Շանթի «Փուռն առջև», և Սադալեանի «Օջախի պահողը»։ Ամսագիրը ունի նաև ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, ուր շօշափվում են ընտանեկան կրթութեան վերաբերեալ կարևորագոյն հարցեր։
Առանձին գրքոյկով լոյս կը տեսնի՝ «Ինչ կարդան մանուկները»—քննադատութիւն վերջերս լոյս տեսած հայերէն մանկական գրքերի։
Բաժանորդագինն է ճանապարհածախսով
Տարեկան. «Հասկեր», մանկական բաժին 3 ր., մանկավարժ. բաժնով 4 ր., կէս տարվանը 1 ր. 80 կ., մանկավարժ. բաժնով 2 ր. 10 կ., մէկ ամսվանը 30 կ., մանկավարժ. բաժնով 35 կ., Պարսկաստանում 3 ր. 50 կ., մանկավարժ. բաժնով 4 ր. 50 կ., արտասահմանում տարեկան 9 ֆր., մանկավարժ. բաժնով 12 ֆր., հրատարակութեան սկզբից մինչև 1908 թ. վերջը 9 ր., մանկավարժ. բաժնով 11 ր. 50 կ.։
Խմբագրատան հասցէն՝ Թիֆլիս, Բեհբութեան փող. 25. (Тифлисъ, редакція журнала „Аскеръ", կամ Tiflis (Caucase) Redaction du journ. «Hasker».
Խմբագիր-հրատարակիչ՝ ՀԱՅ. ԼԻՍԻՑԵԱՆ
Թիֆլիսում կարելի է գրվել նաև «Գուտենբերգ» գրախանութում և «Փարոս» կիօսկում, իսկ Բագւում՝ Сотрудникъ գրախանութում։

ՀՐԱՒԷՐ
Կիրակի, ամսիս 13-ին, առաւօտեան 11 ժամին, Էջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցում լինելու է ծխականաց առաջին ընդհանուր ժողով, նոր երէցփոխի ընտրութիւն կատարելու համար, որի մասին յայտնելով նոյն եկեղեցու երկսեռ ծխականներին՝ խնդրում եմ որոշած օրը և ժամին ներկայ լինել ժողովին՝ ընտրութեանը մասնակցելու։
Թիֆլիսի հայոց եկեղեցիների Բ. մասի գործակալ՝
Ղևոնդ քահ. Մամիկոնեանց
(ու. շ.) 2—2

ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆ
Հայոց պատմութիւն
Ծխ. դպ. Գ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ նիւթ
ՀԱՅՐԵՆԻ ԱՌԱՍՊԵԼՆԵՐ
և
ՎԷՊԵՐ
Գինը 35 կոպէկ
Դիմել կազմողին—Тифлисъ, Бебутовская 25, կամ գրախանութներին։ Դպրոցներին 20% զեղչ։
(օր. մ.) 5—4

Լոյս տեսաւ
ՍԱՀԱԿ ՔԱՀ. ՍԱՀԱԿԵԱՆՑԻ
«ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՕՆԻ»
առաջին տարվայ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
հրատարակութիւնը։
(օ. մ.) 10—8

ԲԺԻՇԿ
Գ. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին եւ երեխայոց, առանձնապէս ստամոքսի եւ աղիքների հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր 12—1 ժ. առաւօտեան
5—7 ժ. երեկոյեան
Միքայէլեան փողոց տ. Ճավճավաձէի № 36.
(ա.օ.) 100—84

ԲԺԻՇԿ
Ա. Միխրաբեանց
Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33։
(ա. օ.) 100—84

ԲԺԻՇԿ
Մէլիք-Էլյաբեան
Վեներական, միզասեռական և մորթու հիւանդութիւններ
Ընդունելութիւն 9—10 առաւօտ.
5—7 երեկ.
Կոնսիւլսկայա փող. № 6, Վետցել հիւրանոցի մօտ։
(և. հ. շ.) 30—5

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Վերադարձաւ Կովկասի հանքային ջրերից և վերսկսեց ընդունելութիւնը ներքին և ջղային հիւանդների, առաւօտ. 9—12 ժ., երեկ. 5—7 ժամ։
Միքայէլեան փողոց, № 27։
(և. հ. շ. կ.) 50—44

ԺՈՂՈՎՐԴ. ԼՈՒՍԱՒՈՐ. ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՏԱԿ
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Գարեգին Լևոնեանի
Թիֆլիսում
(Ժամանակաւորապէս Յովնանեան դպրոցի շինութեան մէջ)
Երկու սեռի անձերի համար
Երկրորդ կիսամեակ՝ յունվար—մայիս
Պարապմունքները երեկոները՝ 5—7 ժ.
ԱՒԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐ. նկարչութիւն, գծագրութիւն, գեղագրութիւն, ձեռարուեստ, փորագրութիւն, քանդակագործութիւն, շքեղ ձեռագործ, հեռանկար (պերսպեկտիվա), գոյների և ստուէրների տեսութիւն, գեղարուեստի պատմութիւն։ Քանդակագործութեան դասերի համար հրաւիրված է պ. Ա. Թաշճեան։
Յունվարից—մայիս վճարն է 25 ռուբ. կամ ամսական 5 ռուբ., դպրոցականների համար 15 ր. և 3 ր.։ Յաճախել ցանկացողները դիմելու են կուրսերի հիմնադրին՝
(29, 9, 12) Бебутовская, 12, առ. ժ. 10—12. 3—3

ՄԱՐՄԱՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ
ԱՆՋԵԼՕ ԱՆԴՐԻՕԼԵՏՏԻ
ԹԻՖԼԻՍ,
Միքայէլեան պրօսպ., 79

Վաճառքի կայ զանազան տիպերի պատրաստի արձանների ահագին պաշար չափաւոր գներով, ինչպէս և ընդունվում են պատուէրներ մարմարեայ և մօզաիկ աշխատանքների։
(Հ.Հ.) 10—10

„ЭКОНОМІЯ"
Исполняетъ срочно, аккуратно и чисто, по возможно дешево слѣдующія работы: всевозможныя типографскія, съ самыхъ крупныхъ и до самыхъ мелкихъ заказовъ, печатаніе большихъ журналовъ книгъ, газетъ, брошюръ, афишъ, объявленій, визитныхъ карточекъ и т. п.
ЭЛЕКТРО-ПЕЧАТНЯ
А. МУГДУСІАКОПОВА съ С-ми
въ Тифлисѣ, Большая Ванкская ул., д. Семинаріи № 3—5.
Принимаются также заказы на ПЕРЕПЛЕТНЫЯ и ЛИНОВАЛЬНЫЯ РАБОТЫ.
Заказы принимаются тамъ же, въ конторѣ типографіи, съ 8 час. утра до 8 час. вечера.
Иногородныхъ заказчиковъ прошу адресовать заказы: Тифлисъ, Типографія „ЭКОНОМІЯ" Ав. Мугдусіакопова съ С-ми.

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Հայոց Ազգագրական ընկ. հրատարակութեամբ
◆ ԼՈՅՍ ՏԵՍՆՈՂ ◆
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ
XVI գիրք
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.—Կոնդակ Մկրտիչ Ա. Վեհափառ Կաթողիկոսի՝ տուած Ազգագրական ընկ.—Նոր-Բայազէտի գաւառ. Ե. Լալայեանի.—Դուրա, պարսկական վիճակախաղ Տար. Յով.—Հայ ժողովրդական վէպը Մ. Աբեղեանի.—Հայոց ժառանգական իրաւունքը. Խ. Սամուէլեանի.—Ս. Էջմիածին և հայոց հնագոյն եկեղեցիները. Մեսրովբ վարդապետ Տէր-Մովսիսեանի.—Կաթողիկոսական յուղարկաւորութիւն և թաղումն. Գարեգին վարդապետ Յովսէփեանի.—Զուարթնոց բեռնագրի մասին. Բասմաջեանի.—Ազգագրութիւն և Գոզեան. Ա. Եզեկեանի.—Մատենախօսութիւն.—Ծրագիր Հայոց Ազգագրական թանգարանի համար նիւթեր հաւաքելու։ Զարդարված է պատկերներով։
ԲԱՑՎԱԾ Է
Առաջիկայ 1908 թւի բաժանորդագրութիւնը։ Տարեկան՝ 4 գրքի բաժանորդագինն է 5 ր.։ Կիսամեայ՝ երկու գրքինը 3 ր., մի գրքինը 1 ր. 50 կ.։
Դիմել՝ Редакція «Азгаграканъ Андесъ», Тифлисъ, Саперная № 5.
(շ.) 2—2

Электропечатня «ЭКОНОМІЯ» Авакъ Мугдусіакоповъ съ С-ми. Большая Ванкская і. д. Семинаріи № 3